ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/51

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի տնօրեն

Է. Փոթոյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1148876),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.02.2021թ. թիվ 26/26/2586-2021 գրությամբ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.02.2021թ. թիվ 01//30-2021 գրության հիման վրա 23.02.2021թ. թիվ 26/26/2586-2021 գրությամբ նախաձեռնել է «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

«Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարած թիվ ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ներկայացրել է գնային առաջարկ միայն 1 չափաբաժնի մասով:

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը (Արձանագրություն թիվ 2) կազմվել է 11.02.2021թ-ին, իսկ անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման պահանջը ուղարկվել է 12.02.2021թ-ին, այսինք՝ հաջորդ օրը:

Սահմանված ժամկետում չստանալով անհամապատասխանությունների շտկման հարցում՝ «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն կարծել է, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են գնման հրավերով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն շտկման պահանջի հարցումը ներկայացրել է կառավարության որոշմամբ սահմանված կետի խախտումով:

Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/51 ընթացակարգի շրջանակներում 03.03.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.02.2021թ. թիվ 01//30-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2021 թվականի փետրվարի 2-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «էֆ Բի էյ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 11-ի 2-րդ նիստի 5-րդ որոշմամբ Ընկերությանը առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել արձանագրված անհամապատասխանությունների շտկում՝ հրավերի պահանջների նկատմամբ: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին փետրվարի 12-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «էֆ Բի էյ» ՍՊԸ-ն որպես շտկում ներկայացված փաստաթղթերով չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 16-ի 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/51 ընթացակարգի շրջանակներում 03.03.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի

ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝

-առաջարկվող ապրանքի նկարագրի (Հավելված 1.1-ում), որտեղ 7-րդ չափաբաժնի մասով հստակ ներկայացված չէ արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և տրամադրել Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ՝ հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 12.02.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.02.2021թ. թիվ 26/26/2586-2021 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 22.02.2021թ. թիվ 01//30-2021 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են***

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «էֆ Բի էյ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝

-առաջարկվող ապրանքի նկարագրի (Հավելված 1.1-ում), որտեղ 7-րդ չափաբաժնի մասով հստակ ներկայացված չէ արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց

կասեցնել նիստը և տրամադրել Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ՝ հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 12.02.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը սույն գործի շրջանակներում հայտնել է, որ սահմանված ժամկետում չստանալով անհամապատասխանությունների շտկման հարցում՝ «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն ենթադրել է, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են գնման հրավերով սահմանված պահանջներին:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,</u>*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

<u>Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և</u>

ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոգրյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու պարտականություն:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, այն է՝ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովը 11.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է Ընկերության կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություն, մինչդեռ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ 11.02.2021թ., ծանուցվելու փոխարեն ծանուցվել է 12.02.2021թ., որպիսի պայմաններում խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Նման պայմաններում գտնում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, հետևաբար հնարավոր չէ արձանագրել «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.02.2021թ. թիվ 26/26/2586-2021 գրությամբ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**